ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/261

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Սենիկ Գալստյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տպագրական և համակարգչային սարքերի տեխնիկայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15608-2021 գրությամբ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.09.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/5004-2021 գրության հիման վրա, 27.09.2021թ.-ին «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.09.2021թ.-ին:

28.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/261 համարի ծածկագիրը:

06.10.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.09.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/5004-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրական և համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Սենիկ Գալստյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Սենիկ Գալստյան» ԱՁ-ի հայտով ներկայացված հավելված 1.1-ում՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներն ամբողջությամբ չեն ներկայացված (ապրանքի արտադրության տարեթիվը նշված չէ):

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումը: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Սենիկ Գալստյան» ԱՁ-ի ներկայացրած հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.09.2021թ.-ի գրությամբ դիմել է «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15608-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայցում եմ Ձեր ներողամտությունը, ստեղծված անճշտության համար: Հայտնում եմ, որ armeps.am համակարգի կողմից մեզ ուղարկված գրությունը տեխնիկական բնութագրի շտկման հետ կապված (ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12 ծածկագրով ընթացակարգ) հայտնվել է մեր էլեկտրոնային փոստի SPAM բաժնում: Մենք այդ գրության մասին տեղեկացանք միայն, երբ սատացանք Ձեր 28.09.2021թ. ուղարկած ծանուցումը, հետևաբար armeps.am համակարգի նամակը մնացել է անպատասխան և տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը չի ուղարկվել ՊՆ գնումները համակարգող անձին:

Խնդրում եմ Ձեզ, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը, ներողամիտ գտնվել և վերանայել Ա/Ձ Սենիկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը:

Կից ներկայացնում եմ էլեկտրոնային փոստի SPAM հատվածը նկարով»:

4. <u>ՍՑ-LO-2021/261 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տպագրական և համակարգչային սարքերի տեխնիկայի ձեռքբերման նպատակով 31.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ի 17-րդ չափաբաժնում բացակայում է գնման ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի արտադրման տարեթիվը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.09.2021թ.-ին ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարվել Մասնակցի s.galstyan1981@mail.ru էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովը 15.09.2021թ.-ին շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվելպահանջվող շտկումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15608-2021 գրությամբ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տպագրական և համակարգչային սարքերի տեխնիկայի ձեռքբերման նպատակով 31.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով

սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հիրավերի 8.16-րդ կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.9 և 8.10 կետերում նշված փաստաթղթերը մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է վերջինիս՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Քարտուղարը պարտավոր է փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տպագրական և համակարգչային սարքերի տեխնիկայի ձեռքբերման նպատակով 31.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ի 17-րդ չափաբաժնում բացակայում է գնման ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի արտադրման տարեթիվը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.09.2021թ.-ին ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարվել Մասնակցի s.galstyan1981@mail.ru էլ. փոստի հասցեին: Սակայն Հանձնաժողովը 15.09.2021թ.-ին շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվելպահանջվող շտկումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15608-2021 գրությամբ «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/261 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սենիկ Գալստյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**